№ 43 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐ 18 — 1895 — ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐ 18 № 43

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրան, կէս տարւանը 6 դրան։ Առանձին համարները 5 շահի։

Ընտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուբլի կէս տարւանը 5 ֆր. կամ 2 բուբլի։

Ընտասահմանից փոդի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели. Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH« Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի շնորհակալութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայկական հարցի մասին. Նամակ Էնկէլիից, Նամակ խմբագրութեանից. ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ։ ԲԱՆ ՍԻՐԱԿԱՆ Տիկին Նովիկովայի նամակը հայերի մասին.

ՄԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Երկու անգամ է որ Էրզրումում, երբ բարբարոս ամբոխը յարձակվում է հայերի վրայ, երբ անպաշտպան, անզէն հայը հալածվում է—երկու անգամ է որ նա ապաստանարան է գտնում Իրանի հիւպատոսարանում, պաշտպանվում նրա դրոշի տակ։

Չը կայ մի ամիսք որ այդ քաղաքում ոչխարների պէս մորթեցին մեր հարիւրաւոր եղբայրների, որ կանոնաւոր զօրքը պաշարելով նրանց խողխողեցին, որ Անատոլուի նոր նշանակուած քննիչ անուանուող Շաքիր փաշայի ներկայութեամբ մորթեցին, յոշոտեցին Էրզրումի հայ ազգաբնակութիւնը, աւերեցին մսխրակոյտ դարձրին նրանց ունեցածը և այդ բոլոր բարբարոսութիւնների մէջ, Իրանի ներկայացուցիչ Իսակ խանը բաց արաւ իր կառավարութեան դրոշը, պատսպարեց նրա տակ՝ հալածուող թշուառներին հարիւրաւոր թւով, պատսպարեց 500 ի չափ անմեղ մանուկների, արտասուքը աչքերին դիմեց զինուորներին և պահապաններին պաղատելով որ չը թպանեն անմեղներին, թշուառներին... Իսակ խանը, Իրանի ազնիւ ու մարդասէր ներկայացուցիչը՝ ամէն մի հալի խորին շնորհակալութեան արժանի է, երախտագիտութեան իրաւունքը ունի։ Նրա շնորհիւ մեր հարիւրաւոր հալածուող, մոլի վայրենիներից, կանխամտածուած հրամանով մեր աղգը ոչնչացնելու մտադրութեամբ խուժանից խլուած եղբայրները վայելեցին Իրանի դրոշի տակ հիւրասիրութիւն, պաշտպանութիւն և խնամք։

Մեր պարտքն է հրապարկապէս յայտնել մեր սրտաբուղխ շնորհակալութիւնը Վեհ. Շահին, նրա կառավարութեան և նրա ներկայացուցիչ Էրզրումի հիւպատոս Իսակ խանին։

Պարսից կառավարութիւնը ունի արդէն դէպի իրեն գրաւած ամէն մի հայի երախտագիտութիւնը, բայց Էրզրումի իր ներկայացուցչի ընթացքն ու մեծահոգիութիւնը, Ն. Կ. Վեհափառութեան վերջերս արտայայտած նոյնատեսակ և աւելի գթոտ շնորհները, մեզ վրայ պարտք են դնում ասել որ այսուհետև իւրաքանչիւր հայ, յիշելով որդոց որդի Իրանի կառավարութեան շնորհները դէպի մեր հալածական ու թշուառ եղբայրները, յիշելով Էրզրումում Իրանի ներկայացուցչի մարդասէր վարմունքը դէպի մեր զոհուող եղբայրները—երախտագիտութեան ջերմ շնորհակալութեան զգացումով է վերաբերուելու դէպի Ն. Կ. Վեհ. Շահը, նրա լուսամիտ նախարարապետ Ն. Վ. Սադրազամը և նրանց ներկայացուցիչ Էրզրումի Հիւպատոս Իսակ խանը։

Շաւիղը պարսկահայ հասարակութեան կողմից դնում է իր խորին շնորհակալութեան արտայայտութիւնը Ն. Կ. Վ. Շահի և Ն.Վ. Սադրազամի ոտքերի մօտ և յայտնում է իր սրտաբուղխ շնորհակալութիւնը Էրզրումի հիւպատոս Իսակ խանին։

Վ. Ֆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Կ. Պոլսից եկող լուրերը հաստատում են որ Թիւրքական պաշտօնական շրջաններում մեծ է դժգոհութիւնը հայոց պատրիարքի դէմ և որ նրան հրաժարեցնելը անխուսափելի է նկատվում։

Kacnій

Կրէտէ կզզում կազմուել է յեղափոխական կոմիտետ և օրեցօր սպասվում է ապստամբութեան։

Neue Freie Presse

Կրէտէից. նոյ 25-ից (Ն. տ.) լուր է հասնում որ մի կռիւ է տեղի ունեցել Սանէնի մօտ և որ ապստամբները յաղթել են Թիւրքերին, որոնք կորցրել են 40 սպանուած և վիրաւորուածներ։

Ռէյտեր

Մեծ յուզմունքներ են տեղի ունեցել Մալաթիայում, Մամուրիէթ-իւլ-Ազիզում և Սվազի շատ գիւղերում։

Ռուսաց հեռ. գործ.

Փոքր Ասիայում Թիւրքերի և հայերի մէջ եղած ընդհարումները այնպիսի մեծ բնաւորութիւն են ստացել, որ երկիրը գտնվում է պատերազմական դրութեան մէջ։

Morning Post

Փոքր Ասիոյ խառնակութիւնները ցոյց են տալիս որ գուցէ Սուլթանի տուած բարեփոխութիւնները շատ են ուշացել։ Կ. Պոլսում Թրքական յեղափոխական կոմիտետները զօրեղանում են։

Times

Թիւրքական աղբիւրները յայտնում են որ Էրզրումում հայերը մտան կառավարութեան դուռը (սարայը), սպանեցին ոստիկանապետին, որին և հետևեց մի խիստ կռիւ։ Ուրիշ աղբիւրներ յայտնում են որ Թիւրքերն էին որ սկսեցին յարձակումը։

Corr-Bureau

Ս.Պատրիարքը ոչ մի տեղեկութիւն չէ ստանում Հայաստանի անցքերից, որովհետև փոստային և հեռագրական հաղորդակցութիւններ դատարել են մի քանի ամսից 'ի վեր. Ստացած է միայն Մարաշից լուրեր որ մեծ վտանգ է սպառնում լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական հասարակութիւններին։ Ս.Պատրիարքը այդ մասին ուղեց Մեծ-Վեզիրին տեսնել, բայց չը ընդունեց։ Այն ժամանակ նա դիմեց դեսպաններին խնդրելով օգնութիւն քրիստոնեաների համար։ Նրան պատասխանեցին որ առ այժմ իրենց խառնուելը անհնար է, քանի որ իրենք չեն ստացել տեղեկութիւններ եղածների մասին, իսկ Բ. Դուռը բոլոր մեղքը հայերի վրայ է բարդում։ Չը նայելով դրան, Բ. Դռան է ուղարկուած խորհուրդներ խաղաղացնելու մահմետական հասարակութիւնը և արգիլելու յետագայ ընդհարումները։

Corr-Bureau

...Ցարծիք չը կայ որ ընդհանրապէս ֆրանսական նոր արմատական կաբինէտը կը պահի իր բարեկամական յարաբերութիւնները Ռուսիոյ հետ, բայց Ծաղոնեան և ապստամբող հայերը գուցէ, կարող լինին սիրելի դառնալ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տ. ՆՈՎԻԿՈՎԱՅԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

—

Հոկտ. 10-ին, Կ. Պոլսի ռուսաց դեսպան Նելիտովի կինը Օ. Ա. Նովիկովան, Լոնդոնի Daily Chronicle թերթին է գրել մի նամակ, որի մէջ նա պարզում է իր հայեացքները հայկական հարցի մասին։ Մէջ ենք բերում այդ նամակից մի քանի շատ հետաքրքիր բաներ ասող կտորներ։

Մեղադրելուց յետոյ Անգլիային, որ սրանից 17 տարի առաջուայ ռուսաց առաջարկին՝ որ աւելի գործնական կերպով ապահովեցւի Բերլինի դաշնագրի յօդուածը՝ արգելք եղաւ, տիկին Նովիկովան ասում է։

«1878 թւի Յուլիս 8-ի կոնգրէսի նիստում իշխան Գորչակովը մէջ բերեց ձևակերպած մի առաջարկ, որով նա ասում էր որ «ի նկատի ունենալով շատ երկար և դառն փորձեր, ինչ միջոցներով էր ուզում Եւրոպան կատարելու իր վճիռները։» Երկու օր յետոյ, իշխանը առաջարկեց հետևեալը ընդունել, որ «Քանի որ Եւրոպան հանդիսաւոր կերպով իր համաձայնութիւնն էր տալիս Բերլինի դաշնագրութեան այդպիսի դէպքում դաշնագրողները պարտաւոր են կոնդրոլ անել և հսկել որ այդ պայմանները կատարուեն մինչև վերջին կէտը։ Նրանք իրենց են վերապահում միմեանց հետ, պէտք եղած ժամանակ, համաձայնելու իրաւունքը, այլ և միջոցներ ձեռք առնելու, որ Եւրոպայի շահերը իրագործուեն և պահպանուեն բոլոր տէրութիւնների արժանապատուութիւնը։»

Այս առաջարկը պարզ էր։ Եթէ նա ընդունուէր, այն ժամանակ բոլոր պետութիւնները ստացած կը լինէին իսկական իրաւունք՝ ստիպելու Թիւրքիային, դաշնագիրութեան թելադրածները կատարելու։... Բայց Ռուսիայի այդ ընթացքը արգելք գտաւ և դրան արգելողը լորդ Սոլսբիւրին էր։ Նա էր որ անցել էր Գորչակովի այդ առաջարկին դէմ եղողների գլուխը։ Նա իսկոյն հարց դրեց թէ արդեօք այդ առաջարկը ընդունելով, եթէ դաշնագրի յօդուածները չը գործադրուէին, հարկ չէր լինելու զինուորական ոյժի դիմել։ Նա յայտնեց որ շատ պիտի ցաւէր, եթէ այդ կետորը (Գորչակովի առաջարկը) ընդունելու լինէր։ Զինուորական ոյժի գործադրութեան անհրաժեշտութիւնը ուղղակի կարևոր գտաւ գրաֆ Շուվալովը։ Նա մատնանիշ արեց 1856 թւի դաշնագրի վրայ, ուր նոյնպէս ասուած էր որ պէտք էր պահանջել քրիստոնեայ ազգաբնակութիւնների համար բարելաւութիւններ և որ այդ «պահանջները» չը գործադրուեցին, մինչև որ կռիւներ և կոնգրես չը յառաջացան։ Ուստի, աւելացրեց Շուալովը, հարկաւոր էր այդ մի և նոյն բանը անել աչքի առաջ ունենալ սկզբից։

Դա ի հարկէ կարելի էր, եթէ պետութիւնները համաձայնուէին տալ հանդիսաւոր և պարտաւորեցնող ապահովութիւն դաշնագրի յօդուածների համար։ Կոմս Շուվալովը առաջարկեց անել այդ։ Ո՞վ մերժեց ընդունել.—լորդ Սոլսբիւրին։ Ինչու։ Ահա նրա խօսքերը այդ մասին։ «Ես չեմ կարողանում հասկանալ ռուսական առաջարկի նպատակը. ես իմ կառավարութեան ստորագրութիւնից ի զատ ոչ մի հանդիսաւոր և ճիշտ ապահովութիւն չեմ ճանաչում»։

Թիւրքաց ներկայացուցիչը աւելի անկեղծ եղաւ։ Նա Սոլսբիւրիի հետ համաձայնուեց ոչ թէ որովհետև չէր «հասկանում» այլ որովհետև շատ լաւ էր հասկանում։ «Ռուսաց առաջարկը —ասաց նա—պայմանագրողների վրայ պարտաւորութիւն է ուզում դնել որ փոխադարձաբար վերահսկեն դաշնագրի կատարելուն

արմատականների սրտին և դրանում. Ռուսիան սրտով համաձայն չի լինիլ...

Моск. Вѣд.

(Պաշտօնական թերթ)

Հաստատ և լաւ աղբիւրներից լսւում է որ շուտով Լորդ Սալսբիւրին պիտի հրաժարւի արտք. գործոց նախարարութիւնից և այդ պաշտօնին պիտի անցնի Պարիզի ներկայ դեսպան լորդ Դիւֆերինը։ Եթէ, իսկապէս այդ կատարւի, այն ժամանակ արտաքին քաղաքականութեան մէջ կարևոր բաներ երևան են գալու և այդ պատճառով էլ շատ զօրեղ և կտրուկ քաղաքականութիւն է յաջորդելու Սալսբիւրիի արդէն բաւական զօրեղ քաղաքականութեանը։

Köln. Zeit

Անտոլուի նահանգներուն քննիչի օգնական կարգւած է առևտրական և հանրօգուտ շինութեանց նախարարութեան վիճակագրութեանց տնօրէն Ֆէթհի պէյ։ Ինչպէս յայտնի է, նա սուրիացի վախճանեալ Ֆրանքօ փաշայի որդին է և անցորդի Լիբանանի կառավարիչ Նաջում փաշայի։

Հայրենիք.

Մինչ ամէն կողմ կոտորածներ են լինում, Էրզրում, Դիարբէքիր, Սվազ և Խարբերդ հարիւրներով են կոտորում և խառնակութիւնը սարսափելի է այդ երկրներում, ահա թէ Կ. Պոլսի թերթերը անընդհատ որպիսի ծիծաղելի բաներ են տպում... «Հոկտ. 18-ի թւականով մեծ եպարքոսին ուղղւած հեռագրեր ծանուցած են թէ Դիարբէքիրի Էրզրումի, Սվազի, Տրապիզօնի, Խարբերդի և Ադանայի նահանգներուն մէջ ալ, շնորհիւ Վեհ. Սուլթանին, կատարեալ անդորրութիւն ու ապահովութիւն կը տիրէ»...

—

Էրզրում 23 Հոկտ. Ամսիս 18-ին (այն օրը երբ հեռագիրը էին խփում մեծ եպարքոսին թէ խաղաղութիւնն ու անդորրութիւնը կատարեալ է), ցերեկւայ 12 ժամին, զինւորական սիգնալի փողերը դէպի բազարն ուղղեցին աւելի քան 2000 զինւոր, որոնք ամէն կողմից շրջապատեցին հայերի խանութները, մագազինները, տները և հրացանի բռնեցին բոլորին, ոչ ոքի թոյլ չը տալով անցկենալ։ Մինչևայն ժամանակ կոտորածը սկսւեց հեռաւեալ թաղերում. Թավրէզի դուռ, Գիւրջիդուռ, Սպայի բազար, Ամիդան, Զայդարի, Ղուլյումչիխանայ, Գեօլբաշի և առ հասարակ ամէն տեղ.... բացի եկեղեցու և Սանասարեան վարժարանի թաղերից։

...Քսան հազար մարդուց բաղկացած ամբոխը կողոպտում էր և ոչնչացնում հայոց բոլոր խանութները, մագազինները, տները, տանելով մինչև վերջին շիւղը... սպանւած է 800 մարդ, վիրաւորւած 500, բազմաթիւ մարդիկ անյետացած են։

Կառավարութիւնը գիշերը դիակները քաղաքից դուրս կրեց և նետեց նախապէս պատրաստւած հորերի մէջ։ Ամսիս 19-ին կանայք և որբերը գտան մօտ 300 դիակ. ամսիս 20-ին 200 ևս։ ...Մսերեան դպրոցի 500 աշակերտներին և աշակերտուհիներին պաշտպանեց Իրանի հիւպատոսարանը։ Բացի սրանից, Իսխակ խանը ապաստարան տւեց աւելի քան 300 ընտանիքի։ Ինչպէս աշակերտներին և աշակերտուհիներին, նոյնպէս և միւսներին նա փլաւով կերակրեց։ Էրզրումի շրջակայքում ոչնչացրած են աւելի քան 40 հայ գիւղեր, բիւրաւոր որբեր և տնանկացածներ անօթի են մնացել և մեռնում են անօգնական...

Հոկտ. 22-ի երեկոյեան, զօրքը սարսափելի արհաւիրք տարածեց հրացանաձգութեամբ։ Հայերը փոխչում էին երդիկներով, նրանցից մի մասը ընկան անգլիական հիւպատոսարանը, իսկ մեծամասնութիւնը կտուրներից (երթիկ) թափւեց պարսից հիւպատոսարանի բակը տանը թողնելով փոքրահասակներին և ծծկերներին։ Զօրքը նրանց հալածում էր։ Կանանց ընդունեց հիւպատոսի կինը, և չը նայելով որ իր որդիք հիւանդ էին, նրանց մխիթարում, հանգստացնում էր և թէյով ու ընթրիքով կերակրեց։ Աւելի քան 300 տղամարդ ապաստան գտան հիւպատոսարանի դիւանատանը և միւս սենեակներում։ Իսխակ խան հիւպատոսը արտասուքն աչքերին դիմեց զինւորներին և պահապաններին, պաղատելով որ չը սպանեն անմեղներին։ Անկեղծ, յաւիտենական շնորհակալութիւն Իսխակ խանին և նրա ընտանիքին, որ փրկեցին հարիւրաւոր մարդիկ....

Ամենաճիշտ աղբիւրներից հաստատւեց որ Էրզրումում սպանւած են 1000 հայ և վիրաւորւած 500.,. Թիւրքական զօրքը և բաշիբոզուկները քաղաքից դուրս ին Էրզրումի դաշտը (ովա), ուր հոկտկան բոլոր գիւղերը դարձրին մոխրակոյտեր և աւերակներ և կոտորեցին ազգաբնակութիւնը անխնայ կերպով»...

Մշակի սեպհական հեռագիրը սահմանագլխից

Կ. Պոլսից հաղորդում են, որ իրերի դրութիւնը շատ լուրջ կերպարանք է ստացել և Լոնդոնից գրում են որ Սալսբիւրին մտադիր է միջազգային կոնդրէս հրաւիրել։

Новости

Լսում է որ նախարարական նոր փոփոխութիւն է տեղի ունենալու Կ. Պոլսում։

Standard

«Ռուսիայի և Անգլիոյ յարաբերութիւնների մէջ չը կայ և չէ էլ կարող գոյութիւն ունենալ պատիւ, և ոչ էլ խիղճ. ընդհակառակն, չը կայ մի ստորութիւն կեղտոտութիւն որին Անգլիան ընդունակ չը լինի վնասելու համար Ռուսիային։ Ծիծաղելի կը լինի դրա համար մեղադրել անգլիացուն. ընդհակառակն դրա համար նրան պիտի յարգել, քանի որ նրանց դէպի Ռուսիան ունեցած ատելութիւնը առաջ է գալիս իրենց հայրենասիրական զգայմունքից և եթէ կայ ջերմութեամբ ցանկալի մի բան, դա այն է որ մենք (ռուսները) նոյնպէս այնքան սիրէին Ռուսիան որ ամէն տեղ միշտ ապրէին հոգալով վնաս տալու Անգլիային... Եւ այն օր երբ այդ մենք պարզ հասկանանք և սոսկալի կերպով, մեր բոլոր ոյժով ատենք Անգլիային, այն ժամանակ է ահա սկսելու մեր աջողութիւնը որպէս յաղթողի»...

Արտատպելով ռուս խաւարամիտ-կրօնական Гражданинъ թերթից սոյն կտորը, Ռուսաց Русс. Вѣд. ազատամիտ թերթը աւելացնում է՝ «Այն գեղեցիկ խօսքերը։

«Ո՞ր վայրենի անտառներից է դուրս եկել այդ գայլային պօլիտիկայի հեղինակը։ Եթէ բուշմանների կամ պատագոնցիների (վայրենի ցեղեր) մէջ լինէին այդքան անկեղծ հրապարակախօսներ, նրանք դրանից աւելի ցինիկական խոստովանութիւն չէին կարող ունենալ։

Русск. Выдом.

Վերահսկող (կոնտրոլի) մասնաժողովի նշանակումը յուսախափ արեց շատերին և այն ազդեցութիւնը արաւ, որ նախկին վէզիր Քէամիլ փաշան ամենից շուտ շտապեց հրաժարական տալ։ Մասնաժողովի նախագահն է Շէվֆիկ-բէյը, որ մի պարզ պալատական է. նրա մահմետական ընկերները կատարելապէս յարմար են նրան. իսկ ինչ վերաբերւում է երեք քրիստոնեայ անդամներին, նրանք թէև ինքնըստինքեան պատկառելի մարդիկ են, բայց բոլորովին անզօր են մի բան անել, գանելով Շէվֆիկ բէյի նախագահութեան ներքոյ։

Times

Վերջին լուրերը այն են, որ հաւանական չէ կոնֆերանսի կազմելը, որովհետև պետութիւնները այդ անելու մի հիմք չունին։ Փոքր Ասիայում խաղաղութիւն է սկսում տիրել (ի հարկէ կը տիրէ, էլ հայ չը մնաց, բոլորին կոտորեցին)։ Լէվանտում հաւաքւած նաւերը 50 են. 18-ը անգլիական է։

Բէյտեր

Անշուշտ այդ բոլոր նաւերը մի լաւ նաւահանդէս կը տան, մի քիչ կը կոնծեն 40000 ի չափ մորթոտւած հայերի յիշատակին և հանգստութեամբ կը վերադառնան իրենց տեղը։ Եւրոպական «գայլային դիպլոմատեան» դրանից աւելի ընդունակ չէ։

ՆՄԱԿ ԷՆԶԷԼԻՑ

—

2 Նոյ. 95

«Կավկազ և Մերկուրի» ընկերութեան «Իմպերատոր Ալէքսանդր Երրորդ» պոստային նաւը Աստարայից գնալիս Դէրբենդի մօտ քարի դիպչելով, ծակւած է և ջրով լցւած. միջի մարդիկ ազատւած են. բաւական ապրանք է եղել մէջը Աստրախանից վերցրած, որը պատկանում է Դավրէժու վաճառականներին։

Տեղոյս ուսումնարանը բաւական լաւ դրութեան մէջ է. վերին աստիճանի գովելի է և այդպիսով Բ. Դուռը պարտաւոր էր լինելու թոյլ տալ որ իր ներքին քաղաքականութեան մէջ մտաւոր գործի ուրիշ կառավարութիւնների կոնկուրենցիայ։

Հէնց այդպէս էլ էր։ Ռուս կառավարութիւնը այդպէս էր ուզում, իսկ անգլեացին էլ հէնց այդ էր մերժում։ Զէ՞ այժմ որ Անգլեայի միակ փափագը այն է, ինչ որ մերժել էր Բերլինի կոնգրեսին....

Դրանից յետոյ տիկին Նովիկովան անցնում է մի քանի խօսք ասելու թէ ինչ բան է հայկական հարցը և նրա նշանակութիւնը։

«Հայկական հարցը, դա—մի Հայաստան կազմելու հարց չէ։ Այդ է առաջին և վերջին խօսքը։ Դա պարադոքս (այլանդակ կարծիք) չէ, այլ փաստ։ Հայկական հարցը Հայաստան կազմելու համար չէ, այլ հայերի հարց է—հայեր որոնք ապրում են Թիւրքական նահանգների մէջ։ Ո՞րտեղ են այդ նահանգները. բարատի կուրծքի վրայ թէ Պարսից սահմաններում. Էրզրումի մօտ։ Այո, ոչ միայն այդտեղ. հայերը ապրում են Թիւրքիայի մէջ ամեն տեղ։ Դրա համար էլ հայկական հարցը—ոչ թէ նահանգների հարց է, այլ ընդհանուր Եւրոպական հարց։ Հէնց այդ է որ սարսափում է Ռուսիային զգոյշ վերաբերել։ Մենք զգում ենք այդ հարցի նշանակութիւնը և լաւ ենք հասկանում թէ ինչ սոսկալի հրդեհ կարող է ծագել դրանից եթէ,.. բայց այդ միտքը երկար բացատրութեան կարօտ էլ չէ։

Նոլկան կարող է այդ հարցին մօտենալ աւելի քիչ անհանգստութեամբ։ Նրա տունը բաւական հեռու է հրդեհ կպցնող դրացիից. բայց մեր տունը մօտ է, մենք չենք կարող կատակել դրա մէջ, քանի որ ամբողջ Արևելեան հարցը մի ակնթարթում մեր թաների վրայ է ընկնում.,.

«Ես ասացի որ հայերը ապրում են ամեն տեղ. բայց այժմ որտեղ աւելի վտանգաւոր է հայկական հարցը. Ոչ թէ Սասունում, Ասիայում. ամենից այրող նիւթը Կ. Պոլսումն է։ Բոլոր դժւար, եւրոպական պետութիւններին դժւարութեան մէջ ձգող ռուսական սահմանակից տեղերի հարցերը հանդիպում են օսմ. պետութեան մայրաքաղաքում, Բ, Դռնից մի քայլ հեռու։ Կամենալով Սասունի արիւնհեղութիւնը դարմանել, դուք սարսափում էք Սամսոնի կոտորածից։ Դուք սարսափում էք նոյնպէս այլ քաղաքների և գաւառների մէջ եղող կոտորածներից, որովհետև հայերը ամեն տեղ ապրում են։ Ասում են որ Կ. Պոլսում միայն թւով 100,000 են։ Թէ որքան է նրանց թիւը սուլթանի իշխանութեան տակ եղած միւս տեղերում - յայտնի չէ։ Հայերը ապրում են ամեն կողմ և ամեն տեղ էլ աչքի զարնող դեր են խաղում։ Նրանք—բանկիրներ են, առևտրականներ, վաշխառուներ, Արևելքի «փողի մարդիկ»։ Սրանք բոլոր աղարների պէս չեն։ Բուլգարիայում մարդագործունի մի ազգի հետ, որ արմատ է բռնել մի պատմական հիմքի վրայ որոշ փծուած մի հողի վրայ, որին հեշտութեամբ կարելի է պատութեան վերածել։ Իսկ հայերը։ Վճռել հայկական հարցը մի փաշալըղի (մեծ նահանգ) վարչութեան ծրագիր տալով—մի և նոյն է թէ փորձել բարելաւելու Եւրոպայում եղող հրէաների դրութիւնը կամ ծրագրել բէֆորմներ լեհական նահանգների համար...

Ռուսաստանը, որի համակրութիւնը դէպի Արևելքը չունի սպաղմատիկական (խիստ,ջերմ) բնաւորութիւն, չէ կարող ամեն բան մոռանալ միմիայն հայերի համար։ Այնտեղ ուրիշ քրիստոնեայ ցեղեր էլ կան, որոնք աւելի մօտ են մեզ։ Հայերը ոչ արիւնով են մեզ մօտ և ոչ էլ հաւատքով»...

Վ. Փ.

հոգաբարձութեան նախագահի առանձին աշխատութիւնը, առաւելապէս նիւթականի կողմից։ Կուսիս (յոյն) եղբայրները նուիրել են 200 ղուռն, Լիանոզովի ձկնորսարանի կառավարիչը 50 բուբլի նուիրելով, տեսրակը առել է որ իրանց բոլոր գործաւորներին էլ զրել տայ. հաւանական է որ 150 ր. հասնի։

4 օր է, որ շարունակ յորդ անձրև է տեղում. ծովը սաստիկ փոթորիկ է որի պատճառով Ռուսաստանի նաւակները փոստային նաւից ստանալ չեղաւ. այժմ 3 հատ շոգենաւ մնացած են գետում կանգնած. ալիքների յորձանքից բաւական տուներ ջուրը քանդեց։

Բլինձի խալվարը (7 փ. 20 ֆունտ.) 38 ղ, է. ձուի հատը մէկ շահի, միսը՝ զրշանքան ինչ շահի։ Նաւի վարձ դէպի Բաքու՝ հակը 20 կոպ։

Այստեղից Բաքու անցաւ Ջաւիղում գրված ի աչագողը որը ոչ մի կասկած չը թողեց իր խաչագող լինելուն։

Ա. Տէր-Սարգսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան 10 Նոյ. 95

Իմ Նոյ. 3-ին արտասանած դասախօսութեան վրայ Ջաւիղի № 41-ում կար մի քննադատութիւն, որի մասին ես հարկ եմ համարում մի քանի բացատրութիւնների պակաս։ Քննադատը ասում է որ ես ոչ մի բան չեմ յիշած այն մեծ նշանակութեան մասին որ Բիսիթունի արձանագրութիւնները ունին Դարեհ առաջնի պատմութեան մէջ։ Ընդհանրապէս, և նրա Հայաստանի հետ մղած պատերազմների մէջ մասնաւորապէս։ Ես ոչ միայն ասացի այդ բոլորը այլ նաև ակնարկեցի թէ ով էր եղած այն անձնաւորութիւնը որին յաջողուել էր կարդալ այդ նշանաւոր արձանագրութիւնները։ Ես իմ խօսքը ապացուցանելու համար ունիմ ոչ միայն միւս ունկնդիրների վկայութիւնը, այլ իմ դասախօսութիւնս, որը գրաւոր լինելով ուղած բոպէին կարող է առաջ բերուել իբրև փաստ։ Իսկ ինչ պ. քննադատը ասում է Նիմրուդի պալատի մասին, կայ մի ուրիշ թիւրիմացութիւն, որը պէտք է ուղղել։ Պ. քննադատը կարծում է թէ ես խօսեցի Նիմրուդ կոչուած աւերակների մասին, ուր եղել է հին Նինուէ քաղաքը, և այդպատճառով ձակնարկում է Լայեարդի և ուրիշների պեղումներին և Բրիտիշ մուզէում տարուած հնութիւններին։ Մինչդեռ իմ խօսածս Բաբիլոնի աշտարակի մասին էր, որին պարսկերէն ասում են «Բորջէ Նիմրուդ» և անգլիերէն Birs Nimród, և ուր սուրբ գրքի պատմութեան համեմատ պեղի ունեցաւ լեզուների խառնակութիւնը։ Եթէ անունների նմանութիւնը մի թիւրիմացութեան պատճառ է եղած պ. քննադատի համար, զէթ նա պիտի հոգնար տարբերութիւնը այն մասնաւոր ակնարկութիւնից որ նարեցի աշտարակշինողների երկինք հասնելու փափագի վրայ, և այնպէս նրա աշխարհագրական դիրքի վրայ որը ես ամենայն մանրամասնութեամբ բացատրեցի։ Նինուէի կամ Նիմրուդի աւերակները գտնվում են Մուսուլի մերձակայքում, իսկ Բաբիլոնի աշտարակը կամ Բորջէ Նիմրուդը Քարբէլայի և Հիլլէյի մերձակայքում։

Յ. Զ. Միրզայեանց

Տպելուց յետոյ պ. Յ. Զ. Միրզայեանի վերի նամակը, պատասխանում ենք նրան որ

1) Ոչ թէ ասել ենք որ նա ոչ մի բան «չէ յիշած» Բիսիթունի մասին, այլ որ յիշածները չոր տոպոգրաֆիական էին և էտնոգրաֆիական բնաւորութիւն իսկ չունէին. ինչ մընաց որ բաւական չէր խօսել Բիսիթունի արձանագրութեան ընթերցանութեան մասին, այլ պէտք էր ժողովրդին պատմել նախ բևեռագիրների ինչ լինելը, ապա նրա ընթերցումից ծագած լոյսի մասին և ապա թէ Դարէհի այդ 1000 տողեայ արձանագրութիւնը որպէս պարզեց Ասսիրեայի, Պարսից և Հայոց պատմութեան շատ կէտերը, կատարելով Եգիպտական Բոզէտտի քարի դերը։ Քիչ բան կայ ասելու Բիսիթունի արձանագրութեան առիթով։ Դասախօսը ոչ մէկը չասեց. նրա խօսածները լոկ տեղագրական էին և այն էլ ջոր աշխարհագրութեան նման։

2) Դասախօսը իր այս պատասխանի մէջ իսկ հնախօսական սխալ է անում կրկնելով որ Նիմրուդի աւերակների տեղ առաջ եղել է Նինուէն։ Նիմրուդի պալատը գտնվում է Ասսիրական ամենաառաջին մայրաքաղաքի Կալաշի տեղը, որ հիմնել է Սալմանասար I-ը և որ գտնվում է այժմեան Մոսուլից 30 քիլոմետր դէպի հիւսիս. մինչ Նինուէի աւերակը գտնվում է նոյն քաղաքից 2 քիլոմետր միայն դէպի արևելը, Հասսէր-չայի մօտ։ Այս սխալը բաւական պերճախօս է ցոյց տալու համար թէ դասախօսը որքան պատրաստել էր սկզբից իր խօսելիքը։

3) Ցիրաւի թիւրիմացութիւն է եղել Նիմրուդի մասին և այդ էլ հէնց այն պատճառով որ Բաբիլոնի աշտարակը համարող դիտանոցի մասին չարժող մանրամասնութեամբ խօսելիս, ինչպէս քննադատը, նոյնպէս և շատ շատերը ձանձրութիւնից՝ դատարել էին լաւ ուշը դնելուց։

Սրանով վերջ ենք դնում բանակռիւին, թողնելով դասախօսին այն մխիթարութիւնը, որ կարծի թէ իր խօսած նիւթը մշակած ունէր դասախօսելիս և որ կարելի էր այդպէս, լուրջ բաների մասին թեթև պատրաստութիւնով ժողովրդական դասախօսութիւն անելու ելնել։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յայտնում ենք մեր բոլոր բաժանորդներին որ հարկաւոր է շտապել նորոգելու իրենց բաժանորդութիւնը 1896 թւի համար, որովհետև չը նորոգողին, առանց բացառութեան ոչ մի համար չէ ուղարկուելու։

—

Ռաշտից Թէհրան շինուելիք խճուղին արդէն սկսուել է և ընկերութիւնը ռուս կառավարութիւնից ապահովութիւն է ստացել 6 տոկոս այն պայմանով, որ ճանապարհը շինի շուտ և լաւ։ Ճանապարհը պիտի վերջանայ, ինչպէս հաղորդում է Times-ը, մինչև Յունվարի կէսը։ Այդ ճանապարհը, որպէս ենթադրվում է մեծ զարկ է տալու ռուսաց վաճառականութեան Պարսկաստանում։ Ծրագրվում է նոյնպէս նաւահանգիստ կառուցանել Էնզէլիում։

—

Ինչու համար է որ մի ծնող իր Հայկազ. դպրոցում սովորող որդին այս օրերս հանել է դպրոցից և տարել բողոքականաց մօտ։ Հայկազ. դպրոցի հոգաբարձութեան այս հարցը տալուց յետոյ սպասում ենք պատասխանի մինչև 5 օր, որից յետոյ մենք ստիպված կը լինինք շատ բան պարզելու։

—

Անցեալ կիւրակէ օրը փոխանորդ Հայրը քարոզ խօսելիս ի միջի այլոց շատ կծու և միանգամայն արդար զայրոյթով խօսեց այն շիրաջինների մասին, որոնցից իւրաքանչիւրի տունը մի մի անբարոյական արարածների ժողովատեղի է լինում և որոնց պահողները հանդուրժում են ամենզզուելի ստորութեան՝ մի դաւաթ օղի ծախելու համար մի ուրիշ արբեցող պարսիկի։ Լսում ենք այժմ որ շիրաջինները, այդ զզուելի «միկիտանչիները», որպէս նրանց կոչում են Կովկասում, զայրացել են վարդապետի դէմ և մինչև իսկ սպառնալիքներ արել։ Մենք ենք այժմ հարցնում ուղղակի այդ շիրաջինիրից. կարող են ուրանալ որ ամէն գիշեր իրենց տունը որջ են շինում ամէն տեսակ փչացած անձերի և որ իրենց տների մէջ է ուր կարելի է լսել ամէն տեսակ փողոցային խօսքեր։ Կարող են ուրանալ որ անբարոյականութիւնը իր ամենազզուելի ցոյցերն է պարզում իրենց տների մէջ օղի դաւաթների ներկայութեամբ... Դժբաղդաբար միայն Թէհրանում չէ, ուր այդպիսի շիրաջիներ կան, այլ Պարսկաստանի շատ քաղաքներում. ոչ ընդունակ աւելի պատուաւոր արհեստների. հայերը ընտրել են այդ ստորացուցիչ ու զզուելի արհեստը և երբ թուում են նրանց դրա հետևանքները—զայրանում են։ Անամօթնե՞ր...

—

Մի հայ բժիշկ մեզ խնդրում է յայտարարել հետևեալը։ «Թէհրանում այժմ սկսել է երկու վարակիչ հիւանդութիւններ, դիֆտերիտն և ինֆլուէնցան։ Հայ ընտանիքներին զգուշացնում ենք որ ըստ կարելոյն մանուկներին եկեղեցուց, բաղնիքներից, խառն բազմութիւնից և առ հասարակ ամէն այն պարագաներից, որ երեխաներին մի տեղ կուտակում է—հեռու պահել։ Դպրոցի ուսուցիչներին խնդրվում է որ զգուշանան բկով հիւանդ մանուկներին դպրոց չընդունեն և այն տուներից, ուր բկացաւով հիւանդներ կան, աշակերտ ներս չը թողնեն դպրոցում։ Ծնողաբեր կանայք ևս ընդունակ են դիֆտերիտի և խիստ առանձնութեան պէտք ունին։ Բկացաւով հիւանդին խիստ առանձնացնել է հարկաւոր առանձին սենեակում միայն իր պահապանին մօտը, իր առանձին բաժակն ու գտալը պիտի ունենայ։ Ամէն նոր սկսած բկացաւ այժմ որպէս դիֆտերիտ պիտի համարել մինչև որ բժիշկը ստուգէ որ դիֆտերիտ չէ։ Դիֆտերիդի դէմ հնարուած նոր դեղը (անտիտօքսիտը) Թէհրան եկել է, միայն թէ ժողովուրդին հարկաւոր է իմանալ որ նրա գործածութիւնը մինչև հիւանդութեան սկսելուց 4 օր լաւ օգուտ կը տայ. ուրեմն թող կանուխ դիմեն նրա գործածութեան եղանակին»։ Շնորհակալութիւն պ. բժիշկին իր նախազգուշացնելու և պատուէրների համար։ Խորհուրդ ենք տալիս անուշադիր չը թողնել նրանց։

—

Մի գերմանահպատակ, Ֆիլիկս Մորալ անունով, արտօնութիւն է ստացել պարսից կառավարութիւնից 75 տարով, Թէհրանից Բաղդատ խճուղի շինելու և փոստային հաղորդակցութիւն հաստատելու համար։ Դրա հետ միասին ստացել է 90 տարով երկաթուղի կամ ելեքտրական գնացք շինելու Թէհրանից դէպի հիւսիս ուղղութեան վրայ մինչև 10 մղոն երկարութեամբ գտնուող գիւղերը։

—

Մեր ձեռքն ընկաւ այս օրերս Գէորգ Դ, կաթուղիկոսի մի կոնդակը Սինոդին ուղղած 1881 թիւ դեկտ. 31 № 571, որի մէջ Ատրպատականի նախորդ առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսը բանադրուած է կաթուղիկոսից չընդունել «ոչ իբրև զեպիսկոպոս, ոչ իբրև զքահանայ և ոչ իբրև զքրիստոնեայ և զգուշացին ի նմանէ ըստ ամենայնի իբրև զթիւնաւոր օձէ և ի կարիճէ»։ Կոնդակը պատուիրում է Սինոդին յայտարարել բոլոր հայերին վռնտել այդ «ամենայն զազրալի լրբութեամբ, արբեցողութեամբ անառակութեամբ, զառիթն բազմատեսակ գայթակղութեանց զշնորհազուրկ եպիսկոպոսն Պարզեանց» արարածին իրենց միջից։ Սոյն կոնդակը մեզ յաջողուեց ձեռք բերել. նրանից պարզապէս երևում է որ Շաւիղը ճանաչում էր արդէն Սուքիասին և դրա համար էլ անխնայ հարուածում էր նրան, մինչև կարողացաւ տապալել նրան և ազատել Ատրպատական թեմը նրանից։ Թող մեր պարսկահայ եղբայրները, որ յաճախ ակնարկել են թէ Շաւիղը շատ անխնայ մտրակում է հասարակական մի քանի անձերի, հասկանան և համոզուեն որ մենք երբ յարձակվում ենք հասարակական անձնաւորութիւնների, վրայ ունինք օրինաւոր փաստեր։

—

Դավրէժից մեզ վատ լուրեր են հաղորդում էլի Արամեան դպրոցի տեսուչ Գ. Զիլինկիրեանի մասին։ Դպրոցի հոգաբարձութիւնը, զարմանում ենք, ինչպէս է յանձնել ուսումնարանը այդ տիրացուին, որ ոչ միայն կանոնաւոր դպրոցի ցենզը չունի, այլ և բացի դատարկ հնացած ֆրազներից՝ ուսուցչութեան ոչ մի ընդունակութիւն չունի։ Ժամանակ է որ Արամեան դպրոցի հոգաբարձութիւնը ի նկատի ունենայ թէ պիտի խոյս տալ շողոքորթող մեծախօս անձերից, ինչ մնաց յանձնել նրանց դպրոցի տեսչութեան պէս մի լուրջ և ծանր պաշտօն։

—

Էրզրումի սոսկալի, բարբարոս կոտորածի ժամանակ՝ բարենորոգութիւնները իբր թէ գործադրող կոմիսար Շէքիր փաշան եղել է Էրզրումում։ Այդպէս են սկսել Էրզրումում բարենորոգութիւնները։

—

Մեզ գրում են Արտաբիլից։ Այստեղ ցրտերը ընկել են. կատարեալ ձմեռ է, մեծ ձիւն է եկել։ Շատ թանգութիւն է մանաւանդ ցորենի, իսկ ցորենը մեծերի մօտ ամբարուած է։ Հայերը շատ անտարբեր են դէպի ուսումնարանը իսկ հոգաբարձուները Աստուած հեռու տանի։ Նրանցից մէկը իր զումարն է խաղում և ինչպէս լսում ենք ուսումնարանի փողերն էլ կգնան. այդպիսի մարդուն հոգաբարձու են կարգել։ Թարվէզու Խնայողական ընկերութիւնը իր գործը սկսել է և այստեղի գործը յանձնարարել մեր աղա-զումարբաշ հոգաբարձուին. արդէն նրանց մի քանի հարիւր թուման էլ է գնացել, ումնից պիտի առնեն. ցիկլերը ինչ կարողացաւ տնել, օր Թավրէզու Խնայողական ընկերութիւնը ինչ անի։ Խորհուրդ ենք տալիս որ ընդհանրութեան փողերի հետ զգոյշ վարուեն մեր պ. պ՝ Խնայողական ընկերութեան կառավարիչները։ Գործի սկզբումն է և ահա կաշառքով և խնամութեամբ գործը յանձնում են արդէն մի յայտնի անձնաւորութեան, որը հատարակաց արդար ձայնի առաջ իրաւամբ վատ անուն ունի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Times-ի մէջ հետևեալ հեռագիրն է տպուած Հոնգ-Կոնգից։—Չինաստանը, Ռուսիայի հետ դաշն կռելով, իրաւունք է տուել, որ ռուսական նպատորմիղը խարիսխ ձգէ Պորտ-Արտուրում, նմանապէս թոյլ է տուել երկաթուղի անցկացնելու չինական հողերի վրայով մինչև Վլադիվաստոկ։ Այդ երկաթուղին կը գտնուի ռուսական վարչութեան ձեռքին, բայց չինացիներին իրաւունք է տրվում գնելու քսան տարուց յետոյ մի որոշ զումարով, որը գրուած է գաշնագրի մէջ։ Սրա հետ միասին Չինաստանը առևտրական ուրիշ զիջումներ էլ է արել Ռուսիային։

Լոնդոնի լրագիրները խօսում են այս լուրի մասին և այս զիջումները բոլորովին անթոյլատրելի են համարում։ Անգլիական ստիպուած կըլինի միջամտել։

—Daily News-ը գրում է, որ Ռուսիան Բուլղարիայի հետ հաշտուելու համար, առաջարկել է հետևեալ պայմանները. 1) որ իշխան Ֆերդինանդը պիտի հրաժարուի գահից. 2) Նախ քան այդ հրաժարումը, նրա որդին, Բորիսը, ռուսադաւանութիւն պիտի ընդունէ։ 3) Պիտի նշանակել երեք խնամակալներ որոնք կառավարեն Բուլղարիան մինչև Բորիսի չափահաս դառնալը և 4) որ բուլղարական զինուորական մինիստրը պէտք է ռուսաշնչակ լինի։

—Memor. Dip. թերթի Հռոմի թղթակիցը գրում է որ Իտալիան վճռել է միանալ Անգլիայի հետ ամեն դէպքերում և որ եթէ Արևելքում ծանր անցքեր պատահեն. ինքը գործելու է եռապետական դաշնակցութիւնից լիովին անկախ և եթէ պէտք լինի, մինչև իսկ ֆրա դէմ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՐԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Կ. Պոլիս 21 Նոյ. Պետութիւնների դեսպանները խնդրել են սուլթանից որ ֆէրմանով թոյլատրել ամեն մի դեսպանատան, մի երկրորդ պահակնաւ ունենալ այնտեղ։

Վիէննա 21 Նոյ. Հունգարական առաջին նախարարը այսօր մի ճառ խօսելով ասաց որ պետութիւնների յայտարարութիւնները ամենագոհացուցիչ հետևանք էին ունեցել և Բ. Դրան ըստիպել էին տնկեղծութեամբ վճռել կարգապահութիւնը վերահաստատելու խնդիրը։ Եղած նահանգներում և քրիստոնեաները պիտի պաշտպանեն։ Նա աւելացրեց որ պետութիւնները կատարելապէս համաձայն են խաղաղութիւնը և ներկայ քաղաքական դրութիւնը (status quo) պահպանել. նոյն պարտաւորութեամբ հրամաններ են ուղարկուած Լէվանդ։

Կ. Պոլիս. 22. Այնպէս է կարգադրուած որ պետութիւնների պահականաւերի միացեալ զօրքը 1000 հոգուց աւելի չը լինի և ասվում է որ Սուլթանը իր հաւանութիւնը տուել է որ մի մասնաւոր յանձնախումբ ընտրի, որը ցերեկ և գիշեր տեղեկութիւն պիտի տայ այն հետևանքների մասին, որոնք պիտի յաջորդեն նոր ձեռք առած միջոցներին, Անատոլիայում կարգը վերահաստատելու համար։—Բ. Դուռը հեռագրել է նահանգների կառավարիչներին, պնտելով որ բոլոր խառնակութիւնները զսպեն։

Կ. Պոլիս, 23 Նոյ. Քրիստոնեաների մի նոր կոտորած է տեղի ունեցել Անթափում, Հալէբի մօտ, ուր 200 հոգի սպանուել. մի մեծ թիւով էլ կոտորած է եղել Մարաշում։ Անիշխանութիւն է տիրում կետրոնական Ալբանիայում, ուր ցեղապետները բանի տեղ չեն դնում Բ. Դրան իշխանութիւնը։

Լոնդոն. 23 «Թայմզը» Սեվաստոպոլից ստացած մի հեռագրի նայելով յայտնում է որ ռուսաց Սև ծովի նաւատորմը պատրաստուելու հրաման է ստացել և Օդեսայի զօրքերը բոլոր պատրաստ են գործնական ծառայութեան մէջ մտնելու (պատերազմելու)

Բերլին. 23. Ոսակիանութիւնը այսօր յանկարծ խուզարկեց սոցիալիստ պատգամաւորների և գլխաւորների տները և կնքեց բոլոր իւր գտած կուսակցական թղթերը։

Լոնդոն. 25. Չինացիք բանակցում են գերմանացի և անգլիացի ընկերութիւնների հետ, փոխառութիւն անելու և իրենց պաշտքի երկրորդ մասը վճարելու համար։

Ս. Պետերբուրգ. 25. Նով. Վրէմեան հաղորդում է որ Ճապոնեան ճանաչում է Ռուսիայի անպոյման իրաւունքը Կորէան և Մանչուրեան իր ազդեցութեան շրջանում պահելու մէջ։

Մատրիտ. 25. Էլի 5000 զինուոր ուղարկուեց Քուբա.

Կ. Պոլիս, 27. Տաճկաց արտաքին գործոց նախարարը երէկ լուր տուեց Սըր Ֆիլիպ Քըրիին, որ թոյլատրութիւն կը շնորհուի պահականաւերի թիւը կրկնապատկելու։ Էնվեր բէյ, հակաքրիստոնեական մի կրօնամոլ նշանակուել է Պերայի միւթէսէ լիֆ։

Լոնդոն. 27. Մարաքի ամերիկացի միսիոնարները յայտնում են որ 19-ին տեղի ունեցած կոտորածը սոսկալի էր. մի քանի հարիւր մարդիկ են սպանուել։ Հայերը հաշվում են որ վերջին դէպքերի ընթացքում 40000 մարդիկ են սպանուել։

Կ. Պոլիս 28. Զը նայելով այն վստահութեանը որ երեքշաբթի օր արտաքին գործոց նախարարը տուաւ Սըր Ֆիլիպ Քըրիին թէ Բ. Դուռը վաւերացրած էր պահականաւերի կրկնապատկութեան արտօնութիւնը՝ այդ խնդրին վերաբերեալ ֆերմանները դեռ չեն շնորհուած։

Հռովմ, 28. Այս երեկոյ պատգամաւորների սենեակում տեղի ունեցած վիճաբանութեան մէջ սինեօր Կրիսպին յայտնեց իւր վստահութիւնը թէ խաղաղութիւնը կը պահպանուի, բայց եթէ տատարաբախտաբար այդպէս չը լինի, Իտալիայի իրաւունքները պիտի պաշտպանուին։ Բարոն Բլանկ, արտաքին գործոց նախարարը նկարագրեց այն եռանդուն ջանքերը որ Իտալիանի գործ էր դնում մի համաձայնութիւն հաստատելու բոլոր պետութիւնների մէջ։ «Դուռը» ասաց նա, «կը սխալուի եթէ մտածէ որ կարող է յապաղումներ անել վիճաբանութիւնն յարուցանելով անցեալի մասին և ուզելով թոյլ չը տալ որ պետութիւնները նա ատորմով պաշտպանեն իրենց խաղաղասիրական շահերը»։

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԸՐԹԷՔ ԳԼԽԱՒՈՐ ԲԵՐՔԵՐԻ

(13 Նոյեմբեր 95)

Նուշի միջոդկ լիգրը (14 և կէս ֆունտ) արժէ . . .	13—	—	դրան
Փիստա (պիստակ) . . .	11—	—	»
Սարդա, խալվարը (18 փութ)	90—	110	»
Ասկարի չամիչ, խալվարը .	45—	60	»
Ցորեն, խալվարը	50—	55	»
Գարի » . . .	32,50	35	»
Շաքար լիդրը . . .	8,20—	8,50	»
Շահանի չամիչ. . . .	125—	130	»
Ընկոյզ.	100—	110	»
Բիդանայ	75 —	80	»
Մանրագլուխ շաքար . .	8,50—	9,30	»
Նաֆտ (ֆիտոզէն) . . .	4 —	4.10	»
Բրինձը էկզէլիում, խալվարը (7 փ. 20 ֆ.) արժէ	38 —	—	»

Սև փողին թումանին 1 դրան. 20 կ. սարֆ ունի։ Առևտուրի մեծ մասը սև փողով է կատարվում, որի պատճառով հեռու չէ որ այս տարի սնանկացողներ շատ լինեն.

Արտօնատէր հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

GRAND HOTEL
ԳՐԱՆԴ ՕՏԷԼ
Հիւրանոց
ԱԼԱ-ԷԴ-ԴՈՎԼԷԹԻ ՓՈՂՈՑՈՒՄ
ԹԷՀՐԱՆ
9—50

Պատիւ ունիմ յայտնելու այն բարեկամներին, որոնք դիմել են ինձ տեղեկանալու համար թէ ճանաչում եմ և կարող եմ երաշխաւորել Հայուհեաց ընկ. վարժարանի վարժուհու ով և կամ ինչ լինելը,—Որ ես ժամանակ չունեցայ անձամբ գնալ տեսնելու. տեսայ պ. Վահան Մնսրովբեանին որը և պատասխանեց այսպէս։ «Բաղդատցի հայերեն մայր և աղջիկ. աղջիկը սովորել է այստեղի բողոքականաց դպրոցում. այժմ մայրը ձեռագործ է սովորեցնում, իսկ աղջիկը՝ վարժուհութիւն է անում»։ Երկար խօսելուց յետոյ, յայտնեց որ ուզողը թող գայ տեսնէ։ Ուստի ես էլ իմ կողմից յայտարարում եմ որ վարժուհուն ճանաչել ուզողը անձամբ կարող է գնալ այնտեղ՝ տեսնել և տեղեկանալ և այդպիսով ալ և ինձ նեղութիւն չը պատճառե այդպիսի հարցերով։

Ռաֆայել Թ. Ադէոսեան
2—2

ԹԱՒՐԻԶՈՒՄ „ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ„ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Զեռնատու արժէքներով գնում է ամէն տեսակ **ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄ** (գործածած) նմոյշները ուղարկել վերջնական արժէքներով։ Պատուածները յետ կը դարձուին, հասցէ՝ Société de cabinet de lecture populaire. Tauris.
4—4

Այս կիւրակի օրից սկսեալ (Նոյ. 11) եօթ շաբաթ շարունակ, հայ աւետարանական եկեղեցոյ քարոզութիւնների բնաբանը լինելու է «Սէր ընդ մէջ մեր»։ Յայտարարվում է որ ցանկացողները կարող են գալ լսելու այդ քարոզները որոնք կը սկսեն առաւօտեան ժամը 9-ից (ըստ եւրոպական)։

Քարոզիչ Միհրան Դամբուրաջեան.
2—3

ՋՕՆ ԼԵԲԲՈԿԻ

Հալիւբ ամենալաւ գրքեր, հին և նոր ժամանակի։

Թարգմ. Արշակ Եդիգարեան

Գինն է 8 կոպէկ

Դիմել Թիֆլիզ. կեդրոնական գրավաճառանոց։
2—2

„ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ“

Ս. Ք. Պ

ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ԼՈՒՄԱՑԻ

Գինն է 60 կոպէկ

Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарянцу.

Թիֆլիսում վաճառվում է նաև Կենդրոնական և Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցներում։ 5—10